



ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՒԼ ՀՊԱԿԱՆՆԵՐԻ ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

(համաժամանակյա եւ տարաժամանակյա ֆննդություն)

Ա) Համաժամանակյա հայեցակերպ:- Հին հայերենը հնդեւրոպական այն քիչ լեզուներից է՝ հին հնդկերենի հետ միասին, որը տարբերակել է խուլ հպականների երկու հնչույթային կարգ՝ շնչեղ (հմմտ. փ(p^h), ֆ(k^h), ք(t^h) եւ ոչ շնչեղ (հմմտ. պ(p), կ(k), տ(t))։ Առանձին հնդեւրոպաբաններ շնչեղ խուլ հպականների հետքեր ցույց են տվել նաեւ հին հունարենում եւ դասական լատիներենում¹, բայց այդ լեզուներում նշված հնչույթները, ըստ ամենայնի, կարճ կյանք են ունեցել։ Ի տարբերություն հին հայերենի ձայնեղ հպականների, որոնց շնչեղության՝ որպէս հնչույթաբանական հատկանիշի հարցը տարակարծությունների տեղիք է տվել եւ, ըստ իս, չի հաստատվում հնչույթաբանական որեւէ տեսությունը²,

¹ Հմմտ.. «Այդ համապատասխանությունները մեզ հարկադրում են, եթե ոչ ողջ հնդեւրոպականի համար ամբողջությամբ, ապա բոլոր դեպքերում այն մարզի համար, որը ներկայացված է հնդիրանական, հայերեն եւ հունարեն լեզուներով, ընդունել *ph եւ *kh շնչեղ խուլերի շարքի առկայությունը» (տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 116),– Э. Прокош, Сравнительная грамматика германских языков, М., 1954, էջ 29, О. Семереньи, Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 65–66. հմմտ. «...վերը նկարագրված փոխակերպումների արդյունքում հունարենի հնչույթաբանական համակարգում առաջանում են ph, th, kh շնչեղ խուլերի կարգը (հնդեւրոպական շնչեղ ձայնեղներից)....» (Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. I, էջ 62). հմմտ. «...հին հունարենի Փ-ն նույնիսկ հելլենիստական դարաշրջանում է նշանակել /p^h/ հնչույթը. համաբանորեն նման անցյալ կարելի է ենթադրել նաեւ լատ. ֆ-ի համար» (А. Г. Герценберг, Краткое введение в индоевропеистику, Санкт-Петербург, 2010, էջ 10)։

² Տե՛ս Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հին հայերենի ձայնեղ հպականները (համաժամանակյա հայեցակերպ), «Բանբեր Երեւանի համալսարանի. Հայագիտություն», № 1, 2019, էջ 40–51։

երկու տիպի խուլ հպականների հնչույթային կարգավիճակի հարցը խնդրահարույց չի եղել երբեւէ: Ըստ այդմ՝ հին հայերենը տարբերակել է շնչեղ եւ ոչ շնչեղ խուլ հպականների հնչույթային կարգեր: Այն հանգամանքը, որ մաշտոցյան այբուբենում այդ երկու տիպի հնչույթների համար ստեղծվել են առանձին գրեր, ճիշտ է՝ ծանրակշիռ, բայց ոչ բավարար նախադրյալ է դրանք ինքնուրույն հնչույթներ ճանաչելու համար³: Սակայն հին հայերենում հպական խուլերի երկու տեսակների՝ որպես հնչույթային առանձին կարգերի հարցը որոշվում է առանց որեւէ դժվարություն՝ հակադրական մեթոդի կիրառումով: Հպական ձայնեղների հետ խուլերի տարբերակիչ գործառույթով հակադրությունը բավարար հիմք է ճանաչելու ձայնեղներից տարբեր հնչույթների առկայությունը հին հայերենում (հմմտ. ԲՄԿ. քան «հողը փորելու, թափելու գործիք» ~ պահ «1. պահելը, 2. կարճատեւ բանտարկություն, 3. զգուշություն», ԲՄԿ. քոյթ «բուժ՝ մեծ մատը» ~ փոյթ «հոգ, խնամք, ջանք», աբ «խմելը, գինարբուք» ~ աբի /աբի/ «եթեր, հուր, լույս, լուսեղեն», - գ՛կ. գայթ «գայթելը, խոչ, որին ոտքը դիպչում եւ սայթաքում է» ~ կայթ «կողով, քիոց», գ՛՛. գայռ «գարշահոտ ցեխ, տիղմ» ~ քայռ /քառամանակ/ «կանանց պարանոցի ականակուռ զարդ», - դ՛ա. դեղ «բուժիչ խոտաբույս, ճար» ~ տեղ «Ա. առատ, հորդ անձրեւ, II. վայր», դ՛թ. դեռ «դեռեւս, տակավին, մինչեւ այժմ» ~ թեռ «չուխայի կամ բրդե թել»⁴), բայց կարող է բավարար չլինել երկու տիպի խուլ հպականների հնչաբանական կարգավիճակը որոշելու համար: Հարցի վերջնական պատասխանը կարող է տալ երկու տիպի խուլերի հնարավոր հակադրությունը: Այն իրողությունը, որ շնչեղ եւ ոչ շնչեղ խուլ հպականները հանդիպում են միատեսակ հնչունական միջավայրում եւ ինքնուրույնաբար տարբերակում են հնչաբանները

³ Օր., ուստի հնչույթաբանության մեջ վիճահարույց է Ե-ի հնչաբանական կարգավիճակի հարցը: Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի (ՄՀԴ) ներկայացուցիչները Բոգոլեն դր Կուրտենների հետեւողությամբ Ե-ն համարում են <и> հնչույթի դիրքային տարբերակ (տե՛ս А. А. РЕФОРМАТСКИЙ, Введение в языковедение, М., 1967, էջ 214, М. В. ПАНОВ, Современный русский язык: фонетика, М., 1979, էջ 150–151), իսկ Լենինգրադի հնչույթաբանական դպրոցի ներկայացուցիչները Լ. Վ. Շչերբայի հետեւողությամբ հակված են ճանաչելու Ե-ի ինքնուրույն հնչույթային կարգավիճակը՝ <ы> (տե՛ս А. В. ЩЕРБА, Теория русского письма // նույնի՝ Избранные работы по русскому языку, М., 1957, էջ 177–179, М. И. МАТУСЕВИЧ, Современный русский язык: фонетика, М., 1976, էջ 88, А. Р. ЗИНДЕР, Общая фонетика, М., 1979, էջ 65–66):

⁴ Ըստ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 323: «Թեռ» բառը ունի նաեւ Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արձատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 173: Ընդհակառակն, չունեն «Նոր բառգիրք հայկազնեան լեզուի» եւ Ռ. Ս. ՂԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004 աշխատությունները:

(/հնչաձեւույթները) եւ նրանց իմաստները (իմա՝ սիգնիֆիկատները), արդեն իսկ հիմք է տալիս խոսելու այդ հնչյունների միջեւ առկա հակադրական (այլ ոչ թե՛ լրացուցիչ բաշխման) հարաբերությունների մասին: Հետեւաբար՝ դրանք համարելու առանձին հնչույթներ (հմմտ. պփ. *պարել* «պար գալ, պար բռնել» ~ *փարել* «I. պարունակել, ման ածել, II. գրկախառնվել»⁵, կփ. մեղկ «կամագուրկ, թույլ» ~ մեղփ «հանցանք, անիրավություն», կաղ «կաղոտն, (փխբբ.) տկար» ~ քաղ «արու այծ, նոխազ, քոշ», կանոն «...4. հարթ սյունակ, 5. Ընդունված կարգ, օրենք» ~ քանոն «տափակ եւ ուղիղ տախտակ՝ ուղիղ գծեր քաշելու համար» եւն. տփ. տեո «քող, շղարշ» ~ թեո «չուխայի կամ բրդե թել»⁶ եւն): Չնայած վերոհիշյալ օրինակներում պփ, կփ, տփ հակադրությունները միայն բառակերպի դիրքում են, բայց ընդհանրապես նշված հնչույթները հակադրություններ են ձեւավորում նաեւ բառամիջի (հմմտ. անբառ / = անբանավոր / «ոչ բանական, անտեղի» ~ անփառ «անփառունակ, անարգ, նվաստ», անդի / = անդեպ / «խոշոր եղջերավոր անասունների խումբ՝ նախիր, ջոկ» ~ անտի «I. այնտեղից, այն կողմից, II. դեռահաս») եւ բառավերջի դիրքերում (հմմտ. արբ «գինարբութ» ~ արփ / = արփի / «եթեր, լույս», երազ «արագ, սրընթաց» ~ երակ «մարմնի արյունատար անոթ, որով արյունը գնում է դեպի սիրտը», արդ «շէնք, շնորհք» ~ արտ «ցանած կամ ցանելիք հող»):

Հին հայերենի բառարանները, հենվելով ձեռագիր մատյանների վկայությունների վրա, տալիս են որոշ բառերի զուգաձեւ գրություններ՝ գանգ-գանկ, ծունգ-ծունկ, ցանգ-ցանկ՝ բացարձակ նույն նշանակությամբ, ինչպես նաեւ՝ անդի2-անտի «այնտեղից, այն ժամանակից, նրանից» ձեւերը՝ իրենց իմաստներից մեկի ընդհանրությամբ⁷: Եթե երկձեւ գրությունը արտացոլում է միեւնույն ժամանակաշրջանի արտասանական իրողությունները, այսինքն՝ համաժամանակյա երեւույթ է, նշանակում է, հնչունափոխական միտումից բացի, գործ ունենք նաեւ հնչույթաբանական մեկ այլ իրողության, մասնավորապես՝ գ-կ -ի եւ դ-տ -ի ազատ հերթագայության (փոփոխական) հետ: Իհարկե, ի տարբերություն գ-կ

⁵ Տե՛ս Ռ. Ս. ՂԱԶԱՐԵԱՆ, նշվ. աշխ., էջ 1268-1269:

⁶ Հստ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», էջ 323: «Թեո» բառն ունի նաեւ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 173: Ընդհակառակն, չունեն «Նոր բառգիրք հայկազնեան լեզուի» եւ Ռ. Ս. ՂԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի բառարան աշխատությունները:

⁷ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազնեան լեզուի», հ. 1, Եր., 1979, էջ 133, 246, «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», էջ 50, 94, Ռ. Ս. ՂԱԶԱՐԵԱՆ, նշվ. աշխ., էջ 81, 147:

հարաբերակցության, որի դեպքում ազատ փոփոխակումը բացարձակ է, դ-տ -ի դեպքում այն ունի սիգնիֆիկատիվային սահմանափակում⁸:

Բ) Տարածամանկյա հայեցակերպ: Ավանդական պատմահամեմատական հայերենագիտության մեջ հայերենի շնչեղ եւ ոչ շնչեղ խուլերը դեռեւս Հ. Հյուբշմանի ժամանակներից («Հայերենի դիրքը հնդեւրոպական լեզուների շարքում». 1875), ընդունված է համարել հնդեւրոպական հպականների տեղաշարժի արդյունք: Հայերենի «բաղաձայնական տեղաշարժի» մասին դրույթը շուրջ հարյուր տարի՝ մինչեւ «կատկայինների տեսության» առաջագրումը 1970-ականների կեսերին, եղել է պատմահամեմատական հայերենագիտության հիմնարար սկզբունքներից մեկը: Իհարկե, մինչ այդ էլ ավանդական հնդեւրոպաբանության ներկայացուցիչներից ոմանք ոչ միայն լրացումներ եւ ճշգրտումներ են մտցրել Հ. Հյուբշմանի կողմից սահմանված «տեղաշարժի» դրույթի մեջ, այլեւ վերապահության մեջ են վերաբերվել նրան: Այսպես, Ա. Մեյեն, հայերենը համարելով ընդհանուր գերմաներենի հետ միասին «բաղաձայնական տեղաշարժ» արձանագրած երկրորդ լեզուն, հայերենում նկատում է նաեւ «տեղաշարժի» ընդհանուր սկզբունքից շեղումներ: Մասնավորապես, ըստ «տեղաշարժի»՝ հ.-ե. *p-ն դարձել է *ph/(p'), «բայց հայերենի ոչ մի p' չի ներկայացնում

⁸ Ազատ փոփոխական հարաբերություն եղել է նաեւ հին հայերենի գ եւ ծ հնչույթների միջեւ՝ բազ եւ բած բառերի կազմում՝ նրանց իմաստներից մեկով գործածության դեպքում (հմտ. բազ՝ «բաժին, ժառանգություն» եւ բած «մաս, բաժին»), բայց նույն հնչույթները հակադրական բաշխման հարաբերության մեջ էին նշված բառերի իմաստային ալլ կիրառություններում (հմտ. բազ՝ «բերնի կապ» ~ բած «1. արքունական հարկ, տուրք, 2. հատուցում, փոխհատուցում»): Հակադրությունը առավել ընդգծված կլինի, եթե համեմատության եզր ընդունվի բազը «կից, միասին հավաքված» նշանակություններով (տես «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», էջ 155 եւ 163, Խ. Ա. ՂԱԶԱՐԵԱՆ, նշվ. աշխ., էջ 236 եւ 250): Այդպիսի օրինակները ցույց են տալիս, որ ճիշտ չէ հնչույթի տարբերական չափանիշ համարել միայն հնչաբառեր տարբերակելը, ինչպես որ առաջարկում են առանձին լեզվաբաններ (տես Z. S. HARRIS, *Methods in structural linguistics*. Chicago, 1951, C. F. HOCKETT, *A manual of phonology*, Memoir 11, Baltimore, 1955, Н. ХОМСКИЙ, *Синтаксические структуры, «Новое в лингвистике»* (այսուհետեւ՝ НЛ), вып. II, М., 1962, էջ 508–510, С. К. ШАУМЯН, *Проблемы теоретической фонологии*, М., 1962, էջ 16, Ю. С. СТЕПАНОВ, *Основы общего языкознания*, М., 1975, էջ 81–82, Վ. Զ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, *Աւերատիւն Շահումեանի երկաստիճան հնչյութաբանական տեսությունը* // Հայկազեան հայագիտական հանդես, հտ. ԼԶ, Պէյրուիթ, 2016 թ., էջ 484–485): Ինչպես երեւում է վերոհիշյալ (զանգ-զանկ եւն) օրինակներից, հնչաբառերը տարբեր են, իսկ բառային իմաստները՝ նույնը: Իհարկե, պիտի ընդունել, որ համանունության երեւույթն էլ իր հերթին խոցելի է դարձնում հնչույթի բնորոշումը որպէս իմաստատարբերակիչ գործառույթ՝ իրականացնող միավորի, որովհետեւ այդ դեպքում էլ միեւնույն հնչույթային կազմն ունեցող բաղադրիչները՝ բառերը, ձեւույթները, ունեն տարբեր իմաստներ (հմտ. արդ՝ «հարդարանք, արդուզարդ» եւ արդ՝ «այծմ, ներկայումս», բազ՝ «բաժին, ժառանգություն» եւ բազ՝ «կից, միասին հավաքված» եւն):

հ.-ե. *ք-ն»⁹։ է. Մակահեւը յուրովի է մեկնաբանում հայերենում եւ գերմանական լեզուներում «բաղաձայնական տեղաշարժի» գաղափարը։ Նրա կարծիքով «հայերենում եւ գերմաներենում բաղաձայնների տեղաշարժը պիտի դիտել, ի հեճուկս Ա. Մեյեի հաստատումների, ոչ թե հպականների հնդեւրոպական համակարգի արմատական ձեւափոխություն, այլ հնդեւրոպական կաղապարների պահպանում», որովհետեւ հպականների երեք շարքերը, էական փոփոխություններ կրելով «մարդահնչաբանական» (իմա՝ հնչյունաբանական՝ Վ. Պ.) առումով, նրանց հնչույթաբանական արժեքայնությունը, սակայն, պահպանվել էր¹⁰։ Հայերենում եւ գերմանական լեզուներում «բաղաձայնական տեղաշարժի» մակաեւան ըմբռնման համար հայեցակարգային նշանակություն ունի այն միտքը, ըստ որի՝ «հնդեւրոպական հպականների երեք շարքերը... մասնակիորեն տեղաշարժված դուրս եկան շնչեղ խուլերով կամ շփականներով»¹¹ (ընդգծ. հեղինակին են՝ Վ. Պ.)։ Գ. Զահուկյանը ցույց է տալիս «տեղաշարժի» սկզբունքից բազմաթիվ շեղումներ, որոնք, ըստ էության, անուղղակիորեն վկայում են, որ, ինչպես Հ. Ֆոգտը, նա եւս վերապահումով է վերաբերվել պատմահամեմատական հայերենագիտության այդ հիմնարար դրույթին¹²։ Այդ առումով է. Բենվենիստի կարծիքն ավելի կտրուկ է. «Այն, ինչը անվանում են «բաղաձայնների տեղաշարժ», լեզուների պատմության մեջ նկատվել է միայն մի դեպքում՝ գերմանական տեղաշարժում։ ...Սակայն ավանդական տեսության համաձայն հայոց լեզուն ընդունվում է իբրեւ այդ տիպի տեղաշարժի երկրորդ օրինակ։ Բայց հենց դրա հետ չի կարելի համաձայնել ժամանակակից տվյալների լույսի ներքո»¹³։

Հայերենում «բաղաձայնական տեղաշարժի» սկզբունքն ընդունողները ընդհանուր առմամբ միատեսակ պատկերացում ունեն ոչ շնչեղ (իմա՝ պարզ) խուլերի առաջացման հարցում, անկախ այն բանից՝ ընդհանուր հնդեւրոպական լեզվում տարբերակում են հպականների

⁹ Sku A. MEILLET, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 30։ Հմմտ. նաեւ. «Հայերենում հավասարապես կա ph (նույնպես նշանակվող p'-ով), որը չի ծագում ոչ *p-ից, ոչ *bh-ից, ոչ էլ *b-ից ...» (А. Мейе, Введение..., с. 115)։

¹⁰ Э. А. МАКАЕВ, Значение армянского языка для реконструкции общиндоевропейского состояния // ՊԲՀ, 1967, № 1(36), ՏԷ. 82։ Հմմտ. նույնի՝ Э. А. МАКАЕВ, Передвижение согласных в армянском языке // Вопросы языкознания (այսուհետեւ՝ ВЯ), 1961, № 6, ՏԷ. 24։

¹¹ Sku Э. А. МАКАЕВ, Значение армянского языка..., էջ 82։

¹² Sku Г. Б. ДЖАУКЯН, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 45։

¹³ Sku Э. БЕНВЕНИСТ, Проблемы армянского консонантизма // ВЯ, 1961, № 3, էջ 38)։ Sku նաեւ՝ Г. Фогт, Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, № 3, էջ 41։

երեք (հմմտ. *b^h, *b, *p), թե՛ չորս (հմմտ. *b^h, *b, *p, *p^h) կարգ: Համապատասխանաբար, հին հայերենի ոչ շնչեղ խուլերը սերել են հ.-ե. ոչ շնչեղ ձայնեղներից (հմմտ. *b > պ, *g > կ, *d > տ¹⁴): Ինչ վերաբերում է շնչեղ խուլերի առաջացմանը, պատկերացումները զգալիորեն տարբեր են: Ըստ հ.-ե.-ում հպականների եռակարգ հայեցակարգի՝ պահպանվում է «տեղաշարժի» տրամաբանությունը, այն է՝ հայերենի շնչեղ խուլերը սերում են հ.-ե. ոչ շնչեղ խուլերից (հմմտ. *p > փ, *k > ք, *t > թ)¹⁵: Քառակարգ հայեցակարգերը եւս հայերենի ոչ շնչեղ խուլերի համար սահմանում են «ոչ շնչեղ ձայնեղ → ոչ շնչեղ խուլ» համապատասխանությունը, սակայն շնչեղ խուլերի համար նշում են երկու տիպի նախաձեռն ոչ շնչեղ եւ շնչեղ խուլեր¹⁶, որը, ըստ էության, «բաղաձայնական տեղաշարժի» սկզբունքի խախտում է, քանզի ստացվում է, որ հայերենի շնչեղ խուլերը որոշ դեպքերում «տեղաշարժի» արդյունք են, իսկ որոշ դեպքերում՝ ոչ, որովհետեւ հ.-ե. շնչեղ խուլերի ուղղակի արտացոլումն են: Իսկ եթե դրանց ավելացվեն տարբեր կարգի շեղումները, որոնց թիվը փոքր չէ, եւ որոնցից շատերը ենթադրում են, թերեւս, մասնավոր բացատրություններ, ապա պատկերն ավելի կամբողջանա: Հմմտ.

1) Ոչ շնչեղ խուլեր.

Պ (p) < *b (33) / *p (6) / *b^h (2) / *b(h) (2) / *p/b(?) (1) – 44 բառ,

Կ (k) < *g (76) / *g^u (39) / *d^u (11) / *k (7) / *k^u (3) / *t^u (2) / *k^u (2) / *k'/g (1) / *g' (1) / *kk (1) / *s (1), – 144 բառ,

Տ (t) < *d (115) / *t (25) / *g' (2) / *θ (2) / *i (1) / *d/t (1) – 146 բառ:

2) Շնչեղ խուլեր.

Փ (p^h) < *p^h (46), – 46 բառ,

¹⁴ Տե՛ս Հ. ՀՅՈՒՐԵՄՅԱՆ, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1990, էջ 60–61, A. MEILLET, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 28–29, Հ. ԱՃԱՌՅԱՆ, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971, էջ 529–536, Г. Б. ДЖАУКЯН, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 86–97, Г. Б. ДЖАУКЯН, Сравнительная грамматика..., էջ 45–50:

¹⁵ Տե՛ս Հ. ՀՅՈՒՐԵՄՅԱՆ, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1990, էջ 60–61, Е. КУРИЛОВИЧ, О понятии передвижения согласных // նույնի՝ Очерки по лингвистике (сборник статей), М., 1962, էջ 334–344:

¹⁶ Տե՛ս A. MEILLET, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 29–37, Հ. ԱՃԱՌՅԱՆ, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետեւ՝ ԼՔՀԼ), հ. 6, Ե., 1971, էջ 516–525, 526–533, 534–536, 543–546, Գ. Ա. ՂԱՓԱՆՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Ե., 1961, էջ 233–241, Г. Б. ДЖАУКЯН, Очерки..., 1967, էջ 86–97, 299, Г. Б. ДЖАУКЯН, Сравнительная грамматика..., էջ 45–54:

թ (k^h) < *k (47) / *s_u (9) / *kh (4) / *k^u (6) / *s (6) / *t_u (2) / *kt^u (1) / *sk'(1), - 76 բառ,

թ (t^h) < *t (81) / *th (19) / *pt (10) / *θ (1) - 111 բառ:¹⁷

Ստորեւ ներկայացնում ենք խուլ հպականների՝ և.-ե. նախալեզու-նայերեն առնչությունների օրինակներ՝ ըստ առավել բնութագրական համապատասխանությունների¹⁸.

*b > պ. *B^[h]el- > պեղեմ, *B^[h]enD^[h] - > պինդ, *mB^[h]o- > ամպ, -ոյ, *skō B^[h]- > ցուպ,

*g/*g^u > Կ. G^[h]el-D^[h]- > կեղտ, *g^u(b)l- > կուլ-, կլանեմ, *G^[h]ēron- G^[h]- > կռունկ, *g^uenā > կին, -աւ,

*d/*t > տ. *D^[h]ā-p-ni- > տան, -ի, *D^[h]āiχēr > տայգր, *ō D^[h]mi-? > ուտեմ, *stēno- > ստին-ք,

*ph > փ. *P^[h]a P^[h]- > փափ-ուկ, *P^[h]u-K^[h]- > փութ, -ամ «քամի, - ուռել», *s P^[h]ēr-s- > սփռեմ, *T^[h]u- P^[h]o- > թուփ, -ոյ,

*k/s_u > ք. *K^[h]aK^[h]/K^[h]a- > քակ-որ «անասունի շորացած աղբ», *K^uēmā - > փմ-ք, -աց, *P^[h]ō- K^[h]u-? > փոքր, -ու, *K^[h]īP^[h]i- > քարք, -ի «թունա-վոր խոշոր օձ», *suiD^[h]-ro-m > փրամ «քրտինք»,

*t/*th/*pt > թ. *ou-T^[h] > աւթ-ոց «օթեւան», *K^[h]eT^[h]-? > խեթ(-եմ), *er-T^[h]- > երթամ, *P^[h]T^[h]ēr-s- > թիռ (թռչիմ):

Վերը նշված թվային տվյալների համաձայն՝ ա) առաջին տեղերում գտնվողները քանակական ակնհայտ գերակշռություն ունեն ոչ միայն երկրորդ տեղերում գտնվողների նկատմամբ, այլև՝ մյուս բոլորի նկատմամբ՝ միասին վերցրած. բ) երկրորդ տեղերում գտնվողները, բացառությամբ *s_u > ք (k^h) առնչության, առաջինների հետ լծորդ հնչույթներ են կամ նրանց հնչարտաբերական տարբերակները եւ կարող են լինել ինչպես ինքնուրույն հնչույթներ, որպիսին էին հին հայերենում, այնպես էլ միեւնույն հնչույթի դիրքային տարբերակները, որպիսին էին ընդհանուր հնդեւրոպական լեզվում¹⁹. գ) մյուս առնչությունների մի մասը

¹⁷ Հաշվումները կատարվել են ըստ Գ. Բ. ՋԱԶՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987 (այսուհետեւ՝ ՀԼՊՈԺ) աշխատության էջ 111-157-ի բառացանկի:

¹⁸ Ինչպես եւ ձայնեղ հպականների դեպքում, խուլերը նույնպես ներկայացնում ենք ըստ ընդհանուր հնդեւրոպականում մեր կողմից ընդունված գրադարձումների (տես Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հին հայերենի ձայնեղ հպականների տարածամանակյա բնութագրերը «Բանբեր Երեւանի համալսարանի. Բանասիրություն», 2019, № 1, էջ 39-40):

¹⁹ Տես Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հպական բաղաձայնների հնդեւրոպական եւ հայկական համակարգերը, «Հայագիտության հարցեր», Եր., 2014, № 2, էջ 121-139:

(հմմտ. *bh//*b(h)>պ, *k//*kʷ// *kʷ//g//*gʷ//*kk>կ, *k//*kʷ// *kh//*kʷ>ք եւ ալլն) նույնպէս, չնայած իրենց փոքրաթիվությանը, հիմնականում կարող են բացատրվել ըստ (բ) կետի. դ) *ph>փ(pʰ) համապատասխանությունը, ինչպէս եւ ուրիշները, հակասում է «տեղաշարժի» սկզբունքին, բայց յուրահատուկ է նրանով, որ այլընտրանք չունի:

Հ.-ե. եւ ոչ հ.-ե. լեզուներից հայերենի կատարած փոխառություններում եւս հնչույթային համապատասխանությունների պատկերը էական փոփոխության չի ենթարկվում: Այսպէս.

Ուրարտերէնից. d>տ (Diau(e)hi>Տայֆ), t>թ (tia(u)- «ասել, պատմել»>թուել «ասել, պատմել»), t>տ (Alištu>Աղստեւ), p>փ (Šupani>Մոփ), p>պ (pahini «արջառ, եզ»>պախէ «տավար, արջառ»), k>ք (inukani «նույն այդ»>ինքեան), k>կ (Uškiani>Ոսկեանք). սեմական լեզուներից. p>պ (ասոր. yapanas>յապանաս «արհամարհանք, թշնամություն»), p/b>պ (ասոր. pap(a)gā/արաբ. babayā>պապակայ, -ի, -ից «թութակ»), p>փ (ասոր. pūtqā (<հուն. πανδοχῆιον) > հյ. փուսկայ/փութկայ «պանդոկ», ասոր. šipōrā, եբր. šōpār>հյ. շեփորայ/շիփորայ), k>ք (kōrā>քորայ «երկիր»), t>տ/թ (ասոր. hānūtā>հյ. խանութ), d>թ (qadsā (<հուն. κάδος) > հյ. կաթսայ/կատսայ), q>կ (ակկադ. qīru, արաբ. qīr> հյ. կիր, -ոյ), k/g>կ (ակկադ. kima(h)hu(m)/gimāhu «գերեզման»>հյ. կմախ-ք, արամ. maškā, ասոր. mēškā>մաշկ, -ի, -ից) եւն. իրանական լեզուներից. b>պ (պ. abranjan> ապարանջան, պ. kurba>կրպակ), p>պ/փ (ավ. apašav- «ես գնալ, հեռանալ»>հյ. ապաշաւ (ի, ի-ա)), d/t>տ (մ.պ. apēdāt, պ. bēdād>հյ. ապիրատ, ավ. axti- «տանջանք, ցավ. ախտ», մ.պ. axi «վատ. տգեղ, հիվանդ»>հյ. ախտ, -ի), g/k>կ (պ. xung/xunk>հյ. խունկ, ավ. kamarā-, մ.պ., պ. kamar>հյ. կամար, պ. kurba>կրպակ), d/t>թ (ավ. dušmainyu-, մ.պ. պ. dušman> հյ. թշնամի, մ.պ. t'g>հյ. թագ, մ.պ. tōšak, պ. toša «սնունդ, ուտելիք»>թոշակ, ի-ա) եւն. հունարէնից. d>թ (κανδῆλα>կանթեղ), t>տ (αὔγοστος>օգոստոս), k/kk>կ (καμάρα>կամար, ἐκκλησία>եկեղեցի), p>պ (ῥπατος> հիւպատոս) «կուսակալ»), ph/f>փ (ἀψίς>ափսէ, φελόνης> փիլոն «անթել վերարկու»), th>թ (βάθρον>բաթրոն «բազմոց», αἰθήρ>եթեր), kh/χ>ք (μέταξα> մետաքս, χάρτης >ֆարտ) եւն. լատիներէնից. k>կ (arcla>արկղ), t>տ (basterna>բաստեռն «գահավորակ»), p>պ (panis «հաց»>պան «կլոր հաց, բլիթ») եւն. կովկասյան լեզուներից. k/ք>կ (ճան. lakoti «լակոտ», մեգր. lakw «շուն», վրաց. lekʷ- «լակոտ»>հյ. լակոտ «շան ձագ»), p>պ (..cirp-, վրաց. .cirpli «ճպուռ» > հյ. ճիպո (ուշ

ճպուռ) «աչքի կեղտ»), d>թ (վրաց., մեգր., ճան. abed-, սվան. habed- / hoded- > հյ. աբեթ «կայծքարի կայծից բռնկվող դյուրավառ պատրույգ»), t/ʔ>տ (վրաց. ʔit̃in-, ճան. xiṭin- «խտղել») > հյ. խտիղ, խտղել «գրգիռ առաջացնել», վրաց. ʔalaxi «ցեխ» > հյ. տաղախ «ցեխ, շաղախ»), p>փ (վրաց. xopi «թի», մեգր. xopi, ճան. xope > հյ. խոփ, -ոյ, վրաց. pant-, սվան. pant-, pint- «ցրել») > հյ. փանդանել «ցրել, դես ու դեն քշել») եւն:

Իհարկե, նշված օրինակները ոչ միշտ են արտացոլում հնչույթային համապատասխանությունների ճիշտ վիճակագրությունը, բայց, ըստ փոխառությունների ամբողջական պատկերի, որն առավել ակնհայտ է իրանականների դեպքում, գերակշռող են «հպական խուլ-հպական խուլ» համընկնումները եւ, ընդհակառակն, հազվադեպ են «ձայնեղ հպական-խուլ հպական/շնչեղ խուլ հպական» համընկնումները²⁰: Եթե նույնիսկ այդ համապատասխանություններից որոշները տարբեր հանգամանքներով բացատրվող շեղումներ են, որպիսիք նշում է Գ. Զահուկյանը հունական փոխառությունների առնչությամբ²¹, միեւնույնն է, տիպաբանական առումով այդ «շեղումները» նույնպես կարելու են, որովհետեւ դրանք բացահայտում են հնարավոր հնչույթային համընկնումների ողջ սպեկտրը (լուսապատկերը):

Հնդեւրոպաբանության մեջ տեղ գտած մի տեսակետի համաձայն շնչեղ հպականների, այդ թվում՝ շնչեղ խուլերի հնչույթային կարգի առաջացման նախադրյալ է եղել տվյալ լեզվում շփական հ(h)-ի առկայությունը²²: Այս դրույթը սանսկրիտի շնչեղ խուլերի առնչությամբ առաջադրել էր Ֆ. դը Սոսյուրը դեռեւս 19-րդ դարավերջի իր մի զեկուցման մեջ²³, որը, սակայն, փոքր ծավալի պատճառով վրիպել էր հնդեւրոպաբանների ուշադրությունից²⁴: Ըստ այդմ՝ սանսկրիտի որոշ բառերի th-ն սկիզբ է առնում «t+կոկորդային» կապակցությունից (հմմտ. pr̥thu- «պատրաստ» <*pl̥tH-u-, սնսկ. tiṣṭhāmi «կանգնում եմ» <*(s)ti-stH-e/o-)²⁵:

²⁰ Ամբողջական պատկերը տես Հ. ԱՅԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն (այսուհետեւ՝ ՀԳ), I մաս, Ե., 1940, II մաս, Ե., 1951, Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, ՀԼՊՆԺ:

²¹ Տե՛ս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 625:

²² Տե՛ս В. В. ИВАНОВ, В. Н. ТОПОРОВ, Санскрит, М., 1960, էջ 67, Вяч. В. ИВАНОВ, Об исследовании древнеармянской фонологической системы в ее отношении к индоевропейской // ВЯ, 1962, № 1, էջ 39:

²³ Տե՛ս F. DE SAUSSURE, Contribution à l'histoire des aspirées sourdes [sanskrit] // Recueil des publications scientifiques, Genève, 1922, էջ 603:

²⁴ Տե՛ս И. М. ТРОНСКИЙ, Общеиндоевропейское состояние (вопросы реконструкции), «Наука», Л., 1967, էջ 11–12, М. МАЙРХОФЕР, Индоевропейская грамматика. Т. 2. Фонетика // «Новое в зарубежной лингвистике» (այսուհետեւ՝ НЗЛ), ВЫП. XXI, «Прогресс», М., 1988, էջ 122:

²⁵ Տե՛ս F. DE SAUSSURE, նշվ. աշխ.:

Հետագայում այդ տեսակետն ընդունել են ուրիշները՝ այն տարածելով առհասարակ շնչեղ խուլերի վրա (Ե. Կուրիլովիչ, Վյաչ. Իվանով, Թ. Գամկրելիձե, Ու. Լեման, Ֆ. Կորտլանդ): Ըստ այդմ՝ օրինաչափ է դիտվում շնչեղ խուլ հպականների հնչույթային կարգի առկայությունը հին հնդկերենում եւ հին հայերենում, որոնց հ(հ)-ն, որը համարվում է հ.-ե. կոկորդայինի ռեֆլեքսներից մեկը (մի տեսակետի համաձայն՝ հիմնականը), այդ լեզուների «հնաբնակ» հնչույթներից է: Հատկանշական է, որ ընդհանուրհնդեւրոպականին շնչեղ խուլերի հնչույթային կարգ են վերագրել ոչ միայն քառակարգ հայեցակարգի կողմնակիցները²⁶, որ միանգամայն օրինաչափ է, այլեւ՝ եռակարգի (Ջ. Էմոնդս՝ *b- *p- *p^h)²⁷, այդ թվում՝ «կատկայինների տեսության» կողմնակիցներից ոմանք (Թ. Գամկրելիձե եւ Վյաչ. Իվանով՝ *b^h- *p'- *p^h, Ֆ. Կորտլանդ՝ *t- *t'- *t^h)²⁸:

Հին հայերենում եւս շնչեղ հպականների գոյությունն ընդունելու հիմնական փաստարկներից մեկը, եթե ոչ՝ հիմնականը, եղել է շփական հ(հ)-ի առկայությունը²⁹: Ջ. Գրեպինը, հայերենի շնչեղ խուլ հպականների ծագումը բացատրելու հարցում որոշիչ համարելով «կոկորդայինների տեսության» դերը, փ(p^h)-ի ծագման՝ իր կարծիքով ոչ համոզիչ ստուգաբանությունը բացատրում է հ.-ե. ռեֆլեքսների սակավությունը («Եւ ճիշտ ինչպես որ շատ քիչ են օրինակները ռեֆլեքսների համար, այդպես էլ հայ. p^c-ի ստուգաբանական տկարությունն է»)³⁰, իսկ ք(k^h)-ի դեպքում առհասարակ ժխտում է դրանց գոյությունը (հմմտ. «Նույն պնդումը կարելի է անել *kh-ի ռեֆլեքսի համար. հայ. k'-ով օրինակներ չկան»)³¹:

²⁶ Ску А. Мейе, Введение..., էջ 116: Ա. Մեյեն հպականների շորս կարգ, այսինքն՝ նաեւ շնչեղ խուլ հպականներ վերականգնում էր միայն «հին հնդկերենով, հայերենով եւ հունարենով ներկայացված» տարածաշրջանի համար (նույն տեղում):

²⁷ Ску П. Дж. ХОППЕР, Языки “decem” и “taihun”: индоевропейская изоглосса, «Новое в зарубежной лингвистике» (այսուհետեւ՝ НЗЛ), вып. XXI, М., 1988, էջ 175:

²⁸ Ску Ж. ОДРИ, Типология и реконструкция // НЗЛ, вып. XXI, М., 1988, էջ 189, Т. В. Гамкрелидзе, Вяч. В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. I, էջ 14-16: Ֆ. Կորտլանդը վերոհիշյալ տեսակետը առաջադրել է 1978-ին հրապարակված «Նախահնդեւրոպական հպականները» ուսումնասիրության մեջ (հմմտ. FREDERIK KORTLANDT, Proto-Indo-European obstruents, IF, 83, 1978, էջ 107-118) եւ պաշտպանել է 1985-ին ուսերենով հրապարակված «Նախահնդեւրոպական կատկայնացած հպականները» հոդվածում (տե՛ս Փ. ԿՈՐՏԼԱՆԴ, Праиндоевропейские глоттализированные смычные // ВЯ, 1985, № 4, էջ 52:

²⁹ Ску Вяч. В. Иванов, Об исследовании древнеармянской фонологической системы..., էջ 39: J. A. GREPPIN, The reflexes of the indo-european “voiceless aspirates” in Armenian, «Միջազգային հայերենագիտական գիտաժողով», Եր., 1984, էջ 35-46:

³⁰ J. A. GREPPIN, նշվ. աշխ., էջ 41:

³¹ Նույն տեղում:

է. Մակաեւը, մերժելով ընդհանուր հնդեւրոպականում շնչեղ խուլերի կարգ կանխադրելու հնարավորությունը եւ հայերենի շնչեղ խուլերը համարելով «ուշ ծագման տարածաշրջանային նորակազմություն», Վ. Պիզանիի հետեւողությամբ չի բացառել դրանց մեկնաբանությունը իբրեւ շփականների³²։ Կարծում ենք՝ առնվազն հայերենի գրավոր զարգացման որեւէ փուլի եւ որեւէ տարբերակի համար, ներառյալ աշխարհաբարի բարբառները, այդպիսի պնդումը բավարար հիմքեր չունի։ Եթե հին հայերենի շնչեղ խուլերը լինեին շփական հնչյուններ, այլ ոչ թե՛ հպական, ապա հնչարտաբերական այդ հատկանիշն առաջին հերթին պիտի պահպանված լիներ պատմական Հայաստանի կենտրոնական տարածքի բարբառներում, մասնավորապես՝ Արարատյան, Մշո, Վանի, Ողմի, Նոր Զուղայի եւն, որոնք, լինելով հայերենի՝ Այրարատ եւ Տուրուբերան նահանգների խոսակցական տարբերակների հետագա զարգացումները, ավելի շատ են պահպանել գրաբարի հնչույթային (/հնչունական) համակարգի բնութագրական գծերը։ Սակայն, ըստ հայ բարբառագիտության տվյալների, նշված բարբառներում այդպիսի երեւույթ չկա³³։

է. Մակաեւի առարկությունը հայերենում բաղաձայնական տեղաշարժի ավանդական ըմբռնման դրույթներից մեկի առնչությամբ, ըստ որի՝ հ.-ե. «մաքուր խուլերը հին հայերենում վերածվել են շնչեղ խուլերի», կարող է ընդունելի լինել միայն մասնակիորեն՝ հ.-ե. ոչ շնչեղ շրթնային խուլի (*p) մասով, որովհետեւ, ինչպես երեւում է նաեւ մեր կազմած վիճակագրությունից, հայերենի շրթնային շնչեղ խուլը՝ փ(p^h)-ն, սերում է հ.-ե. շրթնային շնչեղ խուլից՝ *p^h (ըստ ավանդական քառակարգ հայեցակարգի) կամ հ.-ե. շրթնային խուլի՝ *P^(h), ենթահնչույթային (=գիրքային) շնչեղ տարբերակից (ըստ մեր առաջարկած երկկարգ հայեցակարգի), բայց՝ ոչ հ.-ե. «մաքուր խուլից»³⁴։ Հոգուտ այդ տեսակետի է վկայում նաեւ պն>փ հնչունափոխությունը հետգրաբարյան հայերենում՝ ինչպես գրական լեզվում (հմմտ. սեպհական (<սեպուհական)> սեփական³⁵), այնպես էլ բարբառներում (հմմտ. գրբ. ճանապարհ

³² Տե՛ս Э. А. МАКАЕВ, Передвижение согласных..., ВЯ, 1961, № 6, էջ 25։

³³ Տե՛ս Հ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԼՊ, II մաս, Եր., 1953, էջ 324-361, Ա. ՂԱՐԻՅԱՆ, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, Ա. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972։

³⁴ Տե՛ս Հ. ԱՃԱՌՅԱՆ, ԼՔՀԼ, հ. 6, էջ 517-520, Գ. Բ. ԴՋԱՍԿՅԱՆ, Очерки..., էջ 86-97, Գ. Բ. ԴՋԱՍԿՅԱՆ, Сравнительная грамматика..., էջ 45-50։

³⁵ Հին հայերենի սեպուհ «ասպետ, ազնուականութեան մի աստիճան» բառից (տե՛ս Հ. Բ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1979, էջ 202)՝ սեպուհական>սեպհական>սեփական անցումներով։ Բառային շեշտի տեղաշարժը ու-ից

>ճանփա /ճամփա (Արտ.)³⁶ // ճնա՛փաւ, ճնա՛փա (Ագլ.)³⁷ // ջամփա (Սշ., իհ.)³⁸ // ջոմփա (Հմշ.)³⁹: Ըստ վերոհիշյալ բարբառների տվյալների, ճանապարհ բառի պ>փ հնչյունափոխությունը օրինաչափական բնույթ չունի եւ կարող է բացատրվել միայն որպես պ եւ ճ հնչյունների միաձուլման արդյունք: Իսկ դա, ինչպես երեւում է, օրինակ, Ագուլիսի բարբառային նմուշներից, շեշտի տեղաշարժի հետեւանք է, տվյալ դեպքում՝ դեպի ձախ, մի բան, որը բնորոշ չէ գրական լեզվին, բայց հանդիպում է բարբառներում (հմմտ. ճանապարհ > (ճանպհա) ճանփա /ճամփա): Ուստի պատահական չէ, որ հայերենի ոչ մի տարբերակում պն հաջորդականություն չի հանդիպում. այդ հաջորդականությունը փ-ի վերածվելու հակում ունի:

Երբեմն պ>փ հնչյունափոխություն տեղի է ունենում նաեւ այնպիսի դեպքերում, երբ բարբառը գրական լեզվի հ-ն պահպանում է հնչյունափոխված տարբերակով, այսինքն՝ պ-ի եւ հ-ի միաձուլում չկա (պանվտի>փախվողի- Պլս⁴⁰): Բայց եւ այնպես, կարծում ենք՝ այս դեպքում էլ պ>փ անցումը հ-ի ազդեցության հետեւանք է: Որպես բացառություններ՝ Պոլսի, Արարատյան եւ Ղարաբաղի բարբառներում պ>փ հնչյունափոխություն դրսևորվել է նաեւ (ը)ս հնչյունական հաջորդականությանը նախորդող դիրքում (հմմտ. պսակ [պըսակ]>փսագ [փըսագ]⁴¹, սպրդանել/սպրդիմ «գաղտագողի ներս մտնել» >սփոթնել [սըփըոթնէլ]⁴², ապսպարել [ապըսպարել]>փսպարել [փըսպարէլ]⁴³): Նշված բառերում պ>փ հնչյունափոխությունը կարող է պայմանավորված լինել միաժամանակ երկու գործոնով. մի կողմից՝ շփական ս-ի ազդեցությամբ, իսկ մյուս կողմից՝ երկրորդ պ-ի (տարնմանություն): Հ. Աճառյանը նախորդող

[սեպո՛ւն] վերջին ա-ի վրա [սեպհական] դարձել է ու-ի սղման պատճառ, իսկ անմիջական հարեւանության մեջ հայտնված պ-ն եւ հ-ն միաձուլվել են փ-ի մեջ:

³⁶ Բ. Մարկոսյանը «ճանապարհ» բառին չի անդրադառնում է Արարատյան բարբառի խոսվածքներում պ>փ հնչյունափոխության առնչությամբ, բայց առնվազն Գառնիի խոսվածքում (կարծում ենք՝ ոչ միայն) այն արտասանվում է ճանփա /ճամփա տարբերակներով: Եւ, ընդհակառակն, այդ բառը հիշատակում է բառավերջի հ-ի կրած հնչյունափոխությունների առնչությամբ՝ նշելով նաեւ ճանապարհ ձևը (տես Բ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 75), այսինքն՝ պ-ով, որը քիչ հավանական է. այդ ձևը մաքուր բարբառային չէ, այլ՝ գրական ազդեցության ենթարկված:

³⁷ Տես Հ. ԱՃԱՌԵԱՆ, Քննություն Ագուլիսի բարբառի, Եր., 1935, էջ 129:

³⁸ Տես Հ. ԱՃԱՌԵԱՆ, Քննություն Առտիալի բարբառի, Եր., 1953, էջ 100:

³⁹ Տես Հ. ԱՃԱՌԵԱՆ, Քննություն Համշենի բարբառի, Եր., 1947, էջ 59:

⁴⁰ Տես Հ. ԱՃԱՌԵԱՆ, Քննություն Պոլսահայ բարբառի, Եր., 1941, էջ 68:

⁴¹ Տես Հ. ԱՃԱՌԵԱՆ, նշվ. աշխ.:

⁴² Տես Բ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 69:

⁴³ Տես Հ. ԱՃԱՌԵԱՆ, Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1899, էջ 126:

ս-ի ազդեցությամբ է բացատրել Վանի բարբառում պ-ի շնչեղացումը ուսպն>վոսփ անցման մեջ⁴⁴:

Ինչ վերաբերում է հին հայերենի $p^{(h)}$ եւ $f^{(k)}$ շնչեղ խուլերին, դրանք, ըստ ամենայնի, սերում են հ.-ե. ոչ շնչեղ խուլերից կամ, ավելի ստույգ՝ հ.-ե. հպական խուլերի ոչ շնչեղ տարբերակներից, չնայած այն իրողությանը, որ որոշակի դեպքերում հյ. շնչեղ խուլի համար վերականգնվում է շնչեղ խուլ նախաձեւ՝ $*th > p$ (19), $*kh > f$ (4)⁴⁵: Այդ մասին են վկայում հետեւյալ վիճակագրական տվյալները. $*t > p$ (81), $*t > m$ (25), $*t > n$ (16), $*k > f$ (47), $*k > l$ (8): Շրթնահետնաքմային $*k^u$ -ի հայերեն համարժեքները ավելացնելու դեպքում կունենանք $*k > f$ (53), $*k > l$ (10) հարաբերակցությունը: Հետեւաբար Վ. Պիզանիի բանաձեւի վրա հիմնված դրույթը, ըստ որի՝ «հնդեւրոպական p-ն եւ t-ն հին հայերենում վերածվել են շփականների»⁴⁶, ճիշտ է միայն *p-ի դեպքում (հմմտ. $*P^{(h)}ed > հետ-(ք)$, $*P^{(h)}od > ոտ-ն$ ($*P^{(h)} > \emptyset$), $*P^{(h)}ol > յոլ-ով$ «շատ», $*P^{(h)}reP^{(h)} > երեւիմ$ «երեւում եմ, հայտնվում եմ»): Իսկ հ.-ե. $*t$ -ի՝ հին հայերենում շփականի վերածվելու մասին Վ. Պիզանիի տեսակետը, որի հիմքում $*t > j$ (y) եւ $*t > l$ (լ) հնչյունափոխություններն են՝ ենթադրվող -d > -l- անցումային օղակներով⁴⁷, - հնարավոր չէ միանշանակ պնդել: Թեպետեւ իտալացի անվանի լեզվաբանի աշխատանքին, որին հղում է անում է. Մակաեւր, ծանոթ չլինելու պատճառով չենք կարող վստահորեն ասել, թե հատկապես ինչ օրինակների վրա է հիմնված այդ կարծիքը, բայց դա կռահելը դժվար չէ, որովհետեւ վերոհիշյալ հնչյունափոխությունները ներառող օրինակների թիվը սահմանափակ է: Կարելի է ենթադրել, որ դրանց թվում են $*pə́tēr / (*P[h]ə́tēr) > հայր$, $*mā́tēr > մայր$, $*bhrā́tēr / (*Bhrā́tēr) > եղբայր$ համապատասխանությունները, որոնցում միջձայնավորական դիրքում առկա է $*t > j$ (y) անցումը: Դրանց սեռականի ձեւերում, հայտնվելով անմիջապես r-ին նախորդող դիրքում՝ $*t$ -ն անցնում է l(լ)-ի (հմմտ. $*pā́tros > հաւր$ (որից՝ հաւրո «խորթ հայր»), $*mā́tros > մաւր$ (որից՝ մաւրո «խորթ մայր»), $*bhrā́tros > եղբաւր$ ($*բղաւր > *ղբաւր > *եղբաւր$ ենթադրելի միջանկյալ օղակներով))⁴⁸: Մեր կարծիքով, սակայն, վերոհիշյալը բավարար

⁴⁴ Տէս Հ. Ա. Ճ. Ա. Ռ. Յ. Ա. Ն., Քննություն Վանի բարբառի, Եր., 1953, էջ 81:

⁴⁵ Այս երեւույթը նկատվում է, օր., կելտական լեզուներում (տես Գ. Լ. Բյուիս և Խ. Փեդերսեն, Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954, էջ 53):

⁴⁶ Տէս Յ. Ա. Ա. Մ. Ա. Ե. Վ., Передвижение согласных..., էջ 25:

⁴⁷ Տէս անդ:

⁴⁸ Վերոհիշյալի առնչությամբ պիտի նկատի ունենալ հետեւյալը. 1) Հ. Ա. ճառյանը թվարկում է այդ հնչյունական անցումը վկայող 14 բառ, որոնցից որոշների համար ենթադրում

չէ միանշանակ ասելու, որ հ.-ե. *t-ն նույնպես հայերենում վերածվել է շփականի: Այդպես մտածելու համար մեզ հիմք են տալիս հետեւյալ իրողութիւնները:-

1) Հ.-ե. *p-ն հայերենում անցել է ոչ միայն հ (h), յ (j/y) եւ լ (w/ɹ) շփականների, այլեւ՝ պ (p) հպականի: *P>պ (p) համընկնումը հիմնականում վերաբերում է *sp>սպ հաջորդականութեանը (հմմտ. *spel->(առա-) սպել, *spr-na-mi->սպառնամ, *spēr-s->սպառնամ, *spēr-d->սպ(ր)տուր, *sprdh->սպարդիմ), որը կարող է հիմք տալ՝ կարծելու, թե շփական ս (s)-ի ազդեցությամբ պ (p)-ն կարող էր շփականանալ: Սակայն Ա) ենթադրելի շփականացած պ-ն կարող էր լինել միայն <Պ> հնչույթի գիրքային տարբերակ՝ այլահնչակ, այլ ոչ թե նոր հնչույթ: Այլապես, ինչպես տեսանք վերը (հմմտ. ոսպն> վոսփ), շփական ս-ի ուժեղ ներգործությունը պիտի հանգեցներ շնչեղ փ (p^h)-ի առաջացման: Դա նշանակում է, որ տվյալ դեպքում շփականությունը չունի տարբերակիչ՝ հնչույթաբանական արժեք, ի տարբերություն, օրինակ, *p>հ (h)/յ (j/y)/լ (w/ɹ) անցումների, որոնք հնչույթաբանական իրողություններ են. Բ) Կա նաեւ *app>ապ հաջորդականությունը (հմմտ. *appiō->ապի⁴⁹), որտեղ երկու ձայնավորների միջեւ, մասնավորապես՝ ի-ին նախորդող գիրքում, արտաբերվող պ-ն

է նախահայերենյան -ույ վերջով նախաձեւեր. *կու<կույ, *չու<չույ, *հերու<հերույ, բայց քանի որ հայերենին խորթ է եղել ույ, ինչպես նաեւ իյ (տիյ>տի-f) հաջորդականությունը, ուստի դրանց վերջին յ-ն ընկել է (տես Հ. Ա.ՃԱՌՅԱՆ, ԼՔՀԼ, հ. 6, էջ 522): Հասկանալի է, որ մեծանուն հայագետի տեսակետի հիմքում ու-ի ըմբռնումն է իբրեւ պարզ ձայնավորի (հմմտ. «... ե դարի արտասանության մեջ ու գրության Ա հնչումը ապահով է եւ հաստատ է»,- տես Հ. Ա.ՃԱՌՅԱՆ, Հայոց գրերը, Ե., 1984, էջ 580): Մեր համոզմամբ, սակայն, ու-ն ինչպես գրաբարյան, այնպես էլ նախագրաբարյան փուլում եղել է երկբարբառակերպ (տես Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հին հայերենի ձայնավորական համակարգի ծագումը եւ հնչաբանական արժեքայնությունը // Բանբեր Երեւանի համալսարանի. Հայագիտություն, 2017, № 2 (23), էջ 48-50): Հետեւաբար, հայերենի որեւէ փուլում, այդ թվում՝ նախահայերենյան, հնարավոր չէր լինի (w/ɹ) կիսա-ձայնների անմիջական հաջորդականություն՝ նրանց միջեւ հնչունական ոչ բավարար (իմա՝ թույլ) հակադրության պատճառով: 2) Նշված օրինակներում [j /y] հերթագայությունը, ըստ էության, ձեւահնչույթաբանական է, որովհետեւ, լինելով երկբարբառակերպի բաղադրիչ, j(յ) եւ լ(վ) ձայնորդները հոլովական թեքույթի գործառույթն իրականացնում են երկբարբառակերպային ամբողջության մեջ, այլ ոչ թե առանձնաբար (տես Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ձեւահնչույթի եւ ձեւահնչույթաբանության լեզվաբանական կարգավիճակը // ԲՅՀ, 2009 թ., № 3 (129), էջ 96-105):

⁴⁹ Բարբառային բառ է, որը Գ. Զահուկյանը ներառել է բնիկ հայերեն բառերի ցանկում (տես Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, ՀԼՊԽԺ, էջ 112): Հմմտ. Հ. Ա.ՃԱՌՅԱՆ, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 127: Յու. Պոկորնու բառարանն ունի *appa- «հայր» նախաձեւը. հմմտ. հուն. ἄππα, ἄπφα, ἄπφας, ἄπφας «հայր», թոխ. Բ appakke «հայր» (տես <https://indogermanisch.org/pokorny-etymologisches-woerterbuch/index.htm> // հմմտ. JULIUS POKORNY, Indogermanisches etymologisches Wörterbuch, Volume 1, Bern-München, 1959, էջ 52): Այս օրինակը հին հայերենում միակն է, բայց այդպիսիք կան նաեւ հ.-ե. այլ լեզուներում. հմմտ. *qaper- >

ավելի շուտ կարող էր ունենալ քմային արտաբերություն (հմմտ. [ʷp]), քան թե շփական: Դա հավելյալ կերպով կարող է վկայել սպ հաջորդականության պ-ի ենթադրելի շփականության՝ որպես հնչյունաբանական հատկանիշի մասին:

2) Բնիկ հայերեն 78 բառերից միայն 16-ի դ (d)-ն է սերված համարվում հ.-ե. *t-ից. 59-ի դեպքում այն սերում է *d^h -ից (ըստ իս՝ *D^(h)-ից) եւ մեկական օրինակներ էլ վերականգնվում են *gh (իմա՝ *G^(h)) (*el-eughe > էլունդն), *d (*tu-n-d > թունդ (< *թունտ)) եւ *t/dh/(D^(h)) (*por-t-/(dh-?) > հորդ) նախաձեւերով: Իհարկե, վերջինների արժանահամալսությունը բարձր չէ, եթե նկատի ունենանք բառաձեւի կազմում նրանց դիրքերը եւ հնարավոր զուգաձեւությունները:

3) -d->-đ- անցման մեջ շփական ձ-ն՝ որպես յ (j)-ին եւ լ (l)-ին տանող միջանկյալ օղակ, ըստ ամենայնի, կանխադրվել է գերմանական «բաղաձայնների առաջին տեղաշարժի» համաբանությամբ: Սակայն, ինչպես երևում է թե՛ մեր կազմած վիճակագրությունից եւ թե՛ վերոհիշյալ դիտարկումներից, հայերենում «բաղաձայնական տեղաշարժի»՝ որպես բաղաձայնների հ.-ե. համակարգի հնչույթային կարգերի՝ մեկ հատկանիշով հետեւողական փոփոխության մասին (որպիսին, համաձայն Գրիմի օրենքի, տեղի է ունեցել ընդհանուրգերմաներենում⁵⁰), առնվազն հպականների առնչությամբ խոսք լինել չի կարող նույնիսկ ըստ ավանդական հնդեւրոպաբանական պատկերացումների: Վ. Պիզանիի կողմից կանխադրված -t->-d->-đ->-y/-v- անցումային շղթան⁵¹ չի ներառում հ.-ե. *t-ի հայերենյան բոլոր ռեֆլեքսները: Ավելին, քանականական առումով այն ընդգրկում է անհամեմատ փոքրաթիվ օրինակներ, այն էլ՝ միայն միջձայնավորական դիրքում: Հետեւաբար, որքան էլ հ.-ե. *p-ի համաբանությամբ հայերենում հավանական է թվում նաեւ հ.-ե. *t-ի շփականացումը, լեզվական փաստերը, այնուամենայնիվ, չեն վկայում հօգուտ այդ դրույթի:

4) Հնչյունաբանական տեսանկյունից *K > f (K^h) հարաբերակցությունը (47) էականորեն գերազանցում է հյ. f (K^h)-ի մյուս բոլոր

լատ. sapere «ալծ», հուն. κάπρος «կինճ, վարազ», *sapero->լատ. sapirō «ըմբռնում եմ» եւն (տե՛ս Г. Льюис и Х. Педерсен, նշվ. աշխ., էջ 53):

⁵⁰ Հմմտ. «Երկու ձայնավորի միջեւ *b, d, g, g^w ձայնեղ հպականները վերածվել են շփականների. Այդպիսով, ձայնավորների միջեւ մենք ունենք *b, d, γ եւ w» (А. Мейе, Основные особенности германской группы языков, М., 1952, էջ 46), Сравнительная грамматика германских языков, т. II, М., 1962, էջ 17, Э. Прокош, նշվ. աշխ., էջ 39, А. Бах, История немецкого языка, М., 1956, էջ 33-34:

⁵¹ Տե՛ս Э. А. Макаев, Передвижение согласных..., էջ 25:

համապատասխանությունները՝ միասին վերցրած: Հնչույթաբանական առումով առկա է $*K^{(h)} > f$ (k^h) 51 համապատասխանություն, որովհետեւ $*k$ -ն եւ $*k^h / (*kh)$ -ն հ.-ե. $*K^{(h)}$ -ի դիրքային տարբերակներն են (իմա՛ եւթահնչույթները)⁵²: Դա նշանակում է, որ $*K^{(h)} > f$ (k^h) հնչույթային հարաբերակցությունը երկու անգամ գերազանցում է հյ. f (k^h)-ի մյուս բոլոր համապատասխանությունները՝ միասին վերցրած: Իհարկե, այդքանն էլ կարող էր բավարար նկատվել $*K^{(h)}$ -ն հյ. f (k^h)-ի հիմնական նախաձեւ համարելու համար: Սակայն, չնայած մյուս համապատասխանությունների փոքր քանակին, դրանց անտեսումը հազիվ թե կարող է արդարացված լինել, որովհետեւ առկա է գրեթե նույն պատկերը, ինչ որ հ.-ե. $*t$ -ի դեպքում: Այն է՝ հյ. f (k^h)-ն ունի նաեւ շփական՝ $*s$ (6), շրթնահետնաքմային՝ $*k^u$ (6) եւ տարբեր հնչունականակցություններով համապատասխաններ (հմմտ. $*su$ (9), $*tu$ (2), $*kt^u$ (1), $*sk'(1)$), որոնք հազիվ թե հնարավոր է մեկնաբանել իբրեւ մեկ ընդհանուր սկզբունքի իրացումներ: Հ.-ե. $*s > \text{հյ. } f$ (k^h) առնչությունն ունի այն յուրահատկությունը, որ չի հանդիպում բառարմատի կազմում, այլ՝ միայն իբրեւ հոգնակերտ մասնիկ (հմմտ. $*k'(u)r\ddot{u}s-ni > \text{սրուն-f}$, $*k^u\text{et}\ddot{u}ore-s > \text{չոր-f}$, $*me-s > \text{մե-f}$, $*\ddot{u}-s > \text{դու-f}$, $*poli\ddot{o}-s > \text{ալի-f}$, $*trej\ddot{e}-s > \text{երե-f}$)⁵³: Մյուս կողմից, $*K^{(h)}$ նախաձեւ է վերականգնվում նաեւ հյ. $\text{խ}(x)$ -ի համար (հմմտ. $*k^h\ddot{a}d-s > \text{խած-ի}$, $*k^h\ddot{a}-k^h\ddot{a} > \text{խախա}\ddot{u}-\text{ք «ծիծաղ, քրքիշ»}$, $*k^h\ddot{a}i-t > \text{խայթ «փուշ, խայթոց»}$, $*k^h\ddot{a}tji > \text{խաշ [x\ddot{a}^c]}$ «1. խաշաձեւ փայտ, որի վրա գամում էին մահապարտին մինչեւ մեռնելը, 2. փխբ. վիշտ, չարչարանք», $*muk^h\ddot{o} > \text{մուխ «ծուխ»}$, $*muk^h > \text{մխեմ «ներս մտցնել, խրել»}$, $*skh\ddot{l} > \text{հյ. սխալ «սխալմունք, վրիպում» եւն}$): Ի տարբերություն f (k^h)-ի, որի դեպքում, ինչպես տեսանք, առաջարկվել են տարբեր նախաձեւեր, հայերենի՝ հնդեւրոպական ծագման $\text{խ}(x)$ հնչույթն ունեցող բոլոր բառարմատների համար՝ շուրջ 38, վերականգնվում է միայն հ.-ե. $*k^h$ -ով նախաձեւ: Ընդ որում՝ 1) $*k^h > \text{խ}$

⁵² Տե՛ս Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայական բաղաձայնների հնդեւրոպական եւ հայկական համակարգերը // Հայագիտության հարցեր, 2014, № 2, էջ 121-139:

⁵³ Նշվածներից կարող է բացառություն կազմել միայն $*k'(u)r\ddot{u}s-ni > \text{սրուն-f}$ համապատասխանությունը, որի դեպքում հ.-ե. $*s$ -ը, ըստ ամենայնի, արմատի բաղադրիչ է: Հետեւաբար, հին հայերենի «սրունք» բառի կազմում -նֆ- հաջորդականությունը դրա փոխության արդյունք է՝ հ.-ե. $*s-ni > *ni-s > *n-s > \text{հյ. } -\ddot{u}-f$ անցումով: Ինչ վերաբերում է առհասարակ հ.-ե. $*s > \text{հյ. } f$ անցումին, հնարավոր է, որ հ.-ե. նախաձեւի վաղհայերենյան համարժեքը եղել է հյց. $-u(s)$ վերջը, ապա համաբանությամբ հին հայերենի ընդհանրական $-f$ հոգնակերտը գրավել է հյց. $-u(s)$ -ի տեղը (հմմտ. $*trej\ddot{e}s > \text{երի-u} > \text{երե-f}$, $*k^u\text{et}\ddot{u}ores > \text{չորի-u} > \text{չոր-f}$), որն իր հերթին ուղեկցվել է հ.-ե. բնի ձայնավորի ($*-e$) անկումով կամ, որ ավելի հավանական է, ձուլումով $e\ddot{i}$ -ի հետ: Այն է՝ $*trej\ddot{e}s > *tr\ddot{e}-es > *tr\ddot{e}-s > *tri-s^* > *e\ddot{i} > *i$ անցումներով:

(x) հնչույթային համապատասխանություն, հայերենից բացի, առկա է նաեւ հին հունարենում, հին սլավոներենում եւ իրանական լեզուներում (հմմտ. *muk^ho->հուն. σμύχω «դանդաղ վառում եմ», *sk'akhā > պրսկ. šāx «ցախ, ճյուղ», հն. ռս. соха⁵⁴ «1. իբրեւ արոր գործածվող ծոված ճյուղ, 2. բիր, մահակ», - սնսկ. šaňkhā «խեցի, խխունջ», հուն. κόγχος «խեցի», *khendh- «ուրախություն» > պհլ. xandītan «խնդալ», xandak «ժպիտ» եւն), իսկ *k^h>f (k^h) համապատասխանություն ունեն միայն հայերենը եւ հին հնդկերենը, այսինքն՝ միայն այն լեզուները, որոնց բնորոշ է շնչեղ խուլերի հնչույթային կարգը (հմմտ. *khād-s- «խածել, կծել»>հն հնդկ. khādati «ատամներով կոտրել, լավ ծամել», *skhl̥-? > սնսկ. skhálāmi «նահանջում եմ, տեղի եմ տալիս», *sk'akhā > սնսկ. šākhā «ճյուղ, ոստ»), 2) *k^h>խ (x) համապատասխանությունը, ինչպես տեսանք, հայերենում ներառում է զգալի թվով բառարմատներ, որը նախորդ դրույթի հետ միասին բավարար հիմք է տալիս, որպեսզի այդ անցումը համարենք նույնքան օրինաչափ, որքան *K^(h)>f (k^h)-ն:

Այսպիսով, կատարված քննությունը հիմք է տալիս անելու հետեւյալ եզրակացությունները: -

Ա) Համաժամանակյա հայեցակերպով. 1) հին հայերենը, հին հնդկերենի հետ միասին, հ.-ե. երկու լեզուներից մեկն է, որը տարբերակել է խուլ հպականների երկու հնչույթային կարգ՝ ոչ շնչեղ (պ(p), կ(k), ա(i)) եւ շնչեղ (փ(p^h), ֆ(k^h), ք(t^h)), 2) եթե ոչ շնչեղ խուլերի հնչույթային կարգի հաստատման համար բավարար է նրանց հակադրությունը ձայնեղների կարգի հետ (հմմտ. պ~ք), ապա շնչեղ խուլերի հնչույթային կարգը հաստատվում է երկու ընթացակարգի կիրառումով. ա) շնչեղությունը՝ որպես հնչույթաբանական հատկանիշ, հաստատվելու համար դրանք հակադրել ոչ շնչեղ խուլերի հնչույթային կարգի հետ (հմմտ. փ~պ), բ) խլությունը՝ որպես հնչույթաբանական հատկանիշ, հաստատվելու համար դրանք հակադրել ձայնեղների հնչույթային կարգի հետ:

Բ) Տարաժամանակյա հայեցակերպով. 1) «բաղաձայնական տեղաշարժի» սկզբունքը՝ որպես հայերենում հնդեվրոպական հպականների հնչույթային կարգերի՝ մեկ հատկանիշով հետեւողական տեղափոխություն, ինչպիսին ավանդական հնդեվրոպական լեզվաբանությունն ընդունում է գերմանական

⁵⁴ Չնայած հ.-ե. *k^h>սլ. X համապատասխանությանը՝ սլավ. x-ի նախաձեւը կամ «ակունքը», ըստ Ա. Մեյերի, «ոչ թե k-ն է, որը կորցրել է փականը, այլ՝ ամենից հաճախ š-ն, որը ստացել է շփականի բնույթ» (А. Мейер, Общеславянский язык, М., 1951, էջ 37):

լեզուների համար, հայերենում չի եղել (իհարկե, ընդհանուր հնդեվրոպականում հպականների երկու կարգ ճանաչելու դեպքում, որպիսին հակված ենք ընդունելու մենք⁵⁵, «բաղաձայնական տեղաշարժի» մասին առհասարակ չի կարող խոսք լինել հ.-ե. որեւէ լեզվում, այդ թվում՝ հայերենում, 2) եթե ոչ շնչեղ խուլերի դեպքում «ձայնեղ→ոչ շնչեղ խուլ» անցումն ընդգրկում է շարքն ամբողջությամբ (հմմտ. *b>պ(p), *g>կ(k) *d>տ(t)), որն էլ հիմք է տվել խոսելու հայերենում հ.-ե. հպականների «տեղաշարժի» մասին, ապա շնչեղ խուլերի դեպքում այդպիսի հետեւողականություն չկա. ի տարբերություն f (k^h)-ի եւ ք (t^h)-ի, որոնք սերում են հ.-ե. *k եւ *t ոչ շնչեղներից (ըստ իս՝ *K^(h) եւ *T^(h) հպական հնչույթների ոչ շնչեղ դիրքային տարբերակներից), ապա փ(p^h)-ն սերում է հ.-ե. *p^h-ից (ըստ իս՝ հպական *P^(h) հնչույթի շնչեղ դիրքային տարբերակից), մի հանգամանք, որը խախտում է տեղաշարժի սկզբունքը. պատկերը նույնն է նաեւ տիպաբանական տվյալների լույսի ներքո. 3) չնայած որ հ.-ե. ոչ շնչեղ խուլերը, մասնավորապես՝ *p-ն, առանձին դեպքերում հայերենում անցել են շփականների (հմմտ. *p>հ (h)/յ (j)/ւ (w/ɥ)), դա, սակայն, դեռեւս բավարար չէ նրանց վերագրելու շփականության հատկանիշ՝ որպես հնչույթաբանականի, որովհետեւ այդ անցումները չեն ներկայացնում հնչունափոխության բնութագրական դեպքերը. 4) ինչպես ցույց են տալիս նաեւ հայերենի բարբառներում պ>փ հնչունափոխության դեպքերը, որպես կանոն՝ պ(p)-ն հ-ի հարեւանությունը եւ, ըստ ամենայնի՝ նրա ազդեցությամբ է անցնում փ(p^h)-ի (հմմտ. ճանապարհ> (ճանպհա>) ճանփա / ճամփա): Դրանով հավելյալ կերպով հաստատվում է դեռեւս 19-րդ դարի վերջին Ֆ. դը Սոսյուրի առաջ քաշած դրույթն այն մասին, որ սանսկրիտում և հնչույթի առաջացումը պայմանավորված է «t+h» հաջորդականության առկայությամբ: Հետեւաբար, ինչպես հին հնդկերենում, այնպես էլ հին հայերենում շնչեղ խուլերի հնչույթային կարգի առաջացման նախադրյալ է եղել այդ լեզուներում հ հնչունի (կոկորդային, ըմպանային) առկայությունը. 5) պիտի կարծել, որ շնչեղ խուլերի հնչույթային կարգը հին հայերենում առաջացել է դեռեւս հնդեվրոպական լեզվամիությունից անջատվելու առաջին փուլում՝ սկզբնական վաղնջափայտեանում⁵⁶. 6) եթե նախալեզվյան մի քանի հնչույթ դուստր լեզվում /լեզուներում/ կարող են հանգել միեւնույն հնչույթին, ապա չպիտի բացառել նաեւ հակառակ գործընթացը, այն է՝ դուստր

⁵⁵ Տե՛ս Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հպական բաղաձայնների հնդեվրոպական եւ հայկական համակարգերը, էջ 121–139:

⁵⁶ Տե՛ս Գ. Բ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 25:

լեզվի մի քանի հնչույթ կարող են սերել հնչույթային միեւնույն նախաձեւից, որը եւ տեսնում ենք հ.-ե. *K^(h) > հյ. f (k^h) / ր (x) համապատասխանութունների դեպքում:

Р Е З Ю М Е

Древнеармянский язык, как и древнеиндийский, является одним из индоевропейских языков, который различал две фонемные серии глухих смычных: придыхательные и непридыхательные. Согласно принятым в традиционной индоевропеистике представлениям, эти серии появились в результате «передвижения согласных». Соответственно, несмычные глухие произошли от и. -е. непридыхательных звонких согласных, а придыхательные глухие смычные — от и.-е. непридыхательных глухих. Однако, как показывают статистический анализ языкового материала и типологические параллели, «передвижение» в своем классическом восприятии, как это принято в германских языках, в армянском языке не действовало. Если же принять в и.-е. наличие двух фонемных серий смычных согласных со своими придыхательными и непридыхательными субфонемными вариантами, к чему склонны мы (ср. *B(h), *G(h), *D(h), *P(h), *K(h), *T(h)), о «передвижении» вовсе не может быть речи.

S U M M A R Y

The old Armenian language, like the old Indian, is one of the Indo-European languages that differentiates between two phonemic categories of occlusives — voiced and voiceless. According to the accepted views of the traditional Indo-European studies, these categories are the result of “consonant transference”. Non-aspirated voiceless occlusives developed from the IE non-aspirated voiced occlusives, while aspirated occlusives derived from the IE non-aspirated occlusives. However, based on the statistical investigation of the corresponding language material, the typological parallels demonstrate that transference in its classical sense, as it is the case with Germanic languages, did not work in the Armenian language. And if we take two phonemic categories of occlusives in the Indo-European language with their voiced and voiceless sub-phonemic variations, which we are inclined to do, (compt. *B(h), *G(h), *D(h), *P(h), *K(h), *T(h)), there will be no chance for “transference” at all.